



Աշխատանքային պարտականություններ և գործառույթներ

- Իրականացնում է ծրագրի հաշվապահական հաշվառման աշխատանքները,
- ապահովում է ֆինանսական հոսքերի, վճարումների, տարեկան և եռամսյակային հաշվետվությունների կազմումը,
- իրականացնում է բյուջեով նախատեսված ֆինանսավորման հայտերի, վճարման փաստաթղթերի կազմումը և ներկայացումը,
- աջակցում է եկամուտների և ծախսերի նախահաշիվների ներկայացմանը,
- աջակցում է ՀՀ տրանսպորտի և կապի, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հետ` ծրագրի կառավարման ֆինանսական համակարգի և ծրագրային (էլեկտրոնային) փաթեթի պատրաստման և այլ ֆինանսական հարցերի հասցեագրման ուղղությամբ,
- ապահովում է աշխատանքի և աշխատավարձի գծով հաշվետվությունների կազմումը, ամփոփումը և ներկայացումը,
- հանդիսանում է ֆինանսական գծով առաջնային կապող օղակ բանկի և Հյուսիս-հարավ ՊՈԱԿ-ի միջև,
- մասնակցում է հետագա տրանշերի համար անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստման գործընթացին,
- աջակցում է ծրագրի կառավարման ֆինանսական համակարգի և ծրագրային (էլեկտրոնային) փաթեթի պատրաստման և այլ ֆինանսական հարցերի լուծմանը,
- ապահովում է համապատասխանելիությունը դոնորական կազմակերպությունների Վարկային հատկացման ձեռնարկի և այլ քաղաքականությունների/ընթացակարգերի հետ և սահմանում վերահսկում` համաձայն ընդունված հաշվետու գումարների (աուդիտ) պահանջների,
- ապահովում է վարչական և ծրագրային ծախսերի համապատասխանությունը բյուջեի նպատակներին և հաստատման գործընթացներին,
- ապահովում է դեբիտորական և վարկային պարտքերի ճշգրիտ ներկայացումը,
- վերահսկում և վերլուծում է ամսական բանկային/դրամական հոսքերը, ներառյալ եկամուտները, ծախսերը, դեբիտորական և վարկային պարտքերը,
- վերանայում է ծրագրի խորհրդատուների և կապալառուների հաշիվ-ապրանքագրերը, հայտերը և պայմանագրի փոփոխման դիմումները ֆինանսական կառավարման տեսանկյունից,
- կատարում է գործառույթից բխող վարկային համաձայնագրերում և այլ ծրագրային փաստաթղթերում նախատեսված այլ հանձնարարություններ,
- կատարում է գլխավոր գործադիր տնօրենի այլ առաջադրանքներ:

Իմացություն և որակավորում`

- բարձրագույն տնտեսագիտական կրթություն,
- գլխավոր հաշվապահի որակավորման վկայական (դիտարկվելու է որպես առավելություն),
- առնվազն 3-5 տարվա աշխատանքային փորձ նմանատիպ զարգացման ծրագրերում,
- **FIDIC** տեսակի պայմանագրերի իմացություն և փորձառություն (դիտարկվելու է որպես առավելություն),
- գերազանց հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն (գրավոր և բանավոր),
- ծանոթություն միջազգային կազմակերպությունների ընթացակարգերին (հատկապես` Սսիական Զարգացման Բանկ, Համաշխարհային Բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական զարգացման բանկ, Եվրասիական բանկ և այլ դոնոր կազմակերպություններ) ,

- համակարգչային գիտելիքներ (առնվազն ՀՕ, **Word, Excel, PowerPoint, Microsoft project** կամ նմանատիպ այլ ծրագիր):

Մասնագիտական հմտություններ`

- գերազանց վերլուծական և ներկայացման հմտություններ,
- դիվանագիտական և բանակցային հմտություններ,
- խնդիրների լուծման և արագ որոշումներ կայացնելու հմտություններ,
- պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
- համագործակցող/թիմակից,
- արտագնա աշխատանքային այցեր կատարելու պատրաստականություն,
- արտաժամյա և լարված ռեժիմով աշխատելու ունակություն:

Աշխատանքի պայմաններ և դրույթներ`

- Աշխատանքի պայմաններն ու դրույթները կառավարվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքականությամբ և ընթացակարգերով և աշխատանքային պայմանագրով: